ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/74

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. ՄԿրտչյանի

Պատվիրատու՝ Մեղրաձորի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Մեղրաձորի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Ա. Սուքիասյանի,
«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Մեղրաձոր գյուղի 7-րդ և 11-րդ փողոցներում հեղեղատարի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 07.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել հանձնաժողովի 02.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ ընդունված «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու մասին և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները,

2. ընդունել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 07.09.2021թ.-ին:

08.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/74 համարի ծածկագիրը:

17.09.2021թ.-ին և 01.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.10.2021թ.-ին:

2. <u>«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն 07.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Մեղրաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ Ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Այնուհետև «Վայք գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որով վիճարկվել է այն հանգամանքը, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա է թվաբանական սխալ, ինչի պարագայում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն չեր կարող ճանաչվել հաղթող մասնակից:

Ներկայացված բողոքով «Վայք գրուպ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոումը:

Բողոքներ քննող անձի կողմից 25.08.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 որոշմամբ «Վայք գրուպ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է և դադարեցվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոումը:

Ի կատարումն վերը նշված իրավապարտադիր որոշման գնահատող հանձնաժողովը որոշել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին պետք է տրամադրել շտկման հնարավորություն, որը այդպես էլ չի տրամադրվել, սակայն անհասկանալի պայմաններում www.gnumner.am կայքում 03.09.2021թ. հրապարակվում է արձանագրություն, որտեղ նշվել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշվում նորից առկա է սխալ և հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը որոշում է կայացվել մերժել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը:

www.gnumner.am կայքում 06.09.2021թ. հրապարակված հայտարարության համաձայն՝ «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած այն հիմքով, որ մասնակիցներից ոչ մեկի հայտը չի համապատասխանում գնման պահանջին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում

հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ուղղակի հետևում, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության դեպքում հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն նշել ենք, Մեղրաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարվել է "ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ Ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Այնուհետև «Վայք գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որով վիճարկվել է այն հանգամանքը, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա է թվաբանական սխալ, ինչի պարագայում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն չեր կարող ճանաչվել հաղթող մասնակից:

Ներկայացված բողոքով «Վայք գրուպ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոումը:

Բողոքներ քննող անձի կողմից 25.08.2021թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 որոշմամբ «Վայք գրուպ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է և դադարեցվել է Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի կողմից «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոումը:

Ի կատարումն վերը նշված իրավապարտադիր որոշման՝ գնահատող հանձնաժողովը 30.08.2021թ. հրավիրված նիստով որոշել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին պետք է տրամադրել շտկման հնարավորություն, ընդ որում արձանագրությամբ չեն արձանագրվել, թե որն է առկա անհամապատասխանությունը և մասնակիցը ինչ պետք է շտկի: Վերոհիշյալ արձանագրույունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 31.09.2021թ. ժամը 16:09:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 41-րդ կետով նախատեսված կարգով այդպես էլ մասնակցին չի ուղարկել որևէ ծանուցում՝ շտկում կատարելու պահանջի վերաբերյալ, իսկ շտկմանը նվիրված արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է միայն հաջորդ օրվա ավարտին:

Նման անհասկանալի պայմաններում www.gnumner.am կայքում 03.09.2021թ. հրապարակվում է արձանագրություն, որտեղ նշվել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշվում նորից առկա է սխալ և հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ որոշում է կայացվել մերժել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը:

Այնուհետև, www.gnumner.am կայքում 06.09.2021թ. հրապարակված հայտարարության համաձայն՝ "ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած այն հիմքով, որ մասնակիցներից ոչ մեկի հայտը չի համապատասխանում գնման պահանջին:

Տվյալ պարագայում "ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելով գործել է ոչ իրավաչափ, մասնավորապես՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի արժեքների տոկոսային հանրագումարը՝ չի համընկնում ներկայացված հայտի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գումարի հանրագումարին, որի արդյունքում բողոքը բավարարվել է, արդյունքում հանձնաժողովը պարտավոր էր որպես ի կատարումն վերը նշված որոշման՝ մասնակցին տալ շտկման հնարավարություն՝ ինչը արձանագրվել է 03.09.2021թ. արձանագրությամբ և չի իրականացվել, այսինքն՝ արձանագրությամբ արձանագրվել է որ պետք է տրվի շտկման հնարավորություն, սակայն որևէ շտկման պահանջ չի ներկայացվել մասնակցին:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 41-րդ կետով նախատեսված պահանջները, որն իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել հանձնաժողովի 02.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ ընդունված «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու մասին և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները,
2. ընդունել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին որոշում:

3. <u>Մեղրաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14516-2021 գրությամբ դիմել է Մեղրաձորի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի 07.09.2021թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.09.2021թ.-ին ներկայացված թիվ 552-2021 դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի սեպտեմբերի 08-ի ներկայացված ԳԲՔ-ԼՕ-2021/74 բողոքի տեղեկացվում է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով չի ուղարկվել շտկման ծանուցում, ծանուցման մասին կազմակերպությանը տեղեկացվել է հեռախոսազանգի միջոցով, 31.08.2021թ. ներկայացվել է ծավալաթերթ-նախահաշիվը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Մեղրաձորի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Մեղրաձոր գյուղի 7-րդ և 11-րդ փողոցներում հեղեղատարի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.07.2021թ.-ին հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

iv. www.gnumner.am համացանցային կայքում 11.08.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

v. «Վայք գրուպ» ՍՊԸ-ն 19.08.2021թ.-ին բողոք է ներկայացրել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և խնդրել է պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով ընդունած «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

vi. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.08.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 որոշմամբ «Վայք գրուպ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է՝ պարտավորեցվել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով ընդունած «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

vii. Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ քանի որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա է անճշտություն, Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 41-րդ կետը, «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, սակայն Ընկերության կողմից անհամապատասխանությունները ճեն շտկվել, այն է ներկայացվել է հրավերի 8.8 կետի չհամապատասխանող փաստաթուղթ, ինչի արդյունքում որոշում է կայացվել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել:

viii. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Վայք գրուպ» ՍՊԸ-ի ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից, այնուհետև որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ix. www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2021թ.-ը հրապարակվել է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի համայնքապետարանի կարիքների համար հայտաարրված «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

x. Պատվիրատուն 22.09.2021թ.-ին ներկայացված թիվ 552-2021 գրությամբ ընդունել է «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին սահմանված կարգով անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում չուղարկելու փաստը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից 07.09.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն

գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մեղրաձորի համայնքապետարանի կողմից Մեղրաձոր գյուղի 7-րդ և 11-րդ փողոցներում հեղեղատարի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.07.2021թ.-ին հայտարարված «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով արձանագրվել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված www.gnumner.am համացանցային կայքում 11.08.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ: Սակայն «Վայք գրուպ» ՍՊԸ-ն 19.08.2021թ.-ին բողոք է ներկայացրել գնումների հետ կապված բողոքներ քննող ան ձ ի ն և խնդրել է պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով ընդունած «Մինասյաններ Շին»

ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները, ինչը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 25.08.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 որոշմամբ բավարարվել է ամբողջությամբ:

Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ քանի որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա է անճշտություն, Հանձնաժողովը «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին տվել է շտկման հնարավորություն, սակայն Ընկերության կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել, այն է ներկայացվել է հրավերի 8.8 կետի չհամապատասխանող փաստաթուղթ, ինչից ելնելով որոշում է կայացվել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժել, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է «Վայք գրուպ» ՍՊԸ-ի ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից, այնուհետև որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, ինչով պայմանավորված www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2021թ.-ը հրապարակվել է ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի համայնքապետարանի կարիքների համար հայտաարրված «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Պատվիրատուն 22.09.2021թ.-ին ներկայացված թիվ 552-2021 գրությամբ ընդունել է «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին սահմանված կարգով անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում չուղարկելու փաստը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, չկիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.7-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ը կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա անհամապատասխանությունները, սույն դեպքում, թույլ է տրվել վերոնշյալ դրույթների խախտում:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մեղրաձորի համայնքապետարանի կողմից Մեղրաձոր գյուղի 7-րդ և 11-րդ փողոցներում հեղեղատարի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 29.07.2021թ.-ին հայտարարված «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից 07.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/74 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել հանձնաժողովի 02.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ ընդունված «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու մասին և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները,
- ընդունել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին շտկման վերաբերյալ ծանուցում ուղարկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**